ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հոկտեմբերի 2026թ. թիվ 715-Ա

Ա.ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 22.1 մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի փետրվարի 26-ի թիվ 143-Ա և 2026 թվականի մայիսի 5-ի թիվ 287-Ա որոշումները, հաշվի առնելով Ա.Կյուրեղյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Աշոտ Կյուրեղյանին տրամադրել 2025-2026թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մնացած մասը ս/թ հոկտեմբերի 5-ից 12-ը ներառյալ՝ 6 աշխատանքային օր:

2. Ա.Կյուրեղյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հոկտեմբերի 13-ից:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Կից գրությամբ սույն որոշումը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ա.Կյուրեղյանի պարտականությունները կատարող նշանակելու համար:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-10-02 16:34:34 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 2
ք.Վանաձոր